ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

18 հունիսի հինգշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

78
(3287)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՄԵՐԺԵԼ Է ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Արդարադատության նախարարությունը, պատասխանելով «Ժողովուրդ» օրաթերթի հարցմանը, տեղեկացրել է, որ վերջին տարիներին մերժվել է միայն մեկ կուսակցության գրանցում: Խոսքը Արթուր Ղազինյանի կողմից հիմնադրված քաղաքական ուժի մասին է, որի պետական գրանցման դիմումը մերժվել է Ն պետական ռեգիստրի պետի կողմից: Նախարարության փոխանցմամբ՝ մերժման հիմքը եղել է «Կուսակցությունների մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը: Այդ կետը սահմանում է հետեւյալը. «Կուսակցության հիմնադիրների թիվը չի համապատասխանում սույն օրենքի պահանջներին, կամ կուսակցության հիմնադիր համագումարում որոշում չի ընդունվել կուսակցության ստեղծման կամ կուսակցության ծրագրի ընդունման կամ կանոնադրության հաստատման կամ ղեկավար կամ վերահսկողություն իրականացնող մարմինների կազմավորման մասին, ինչպես նաեւ ընտրված չէ մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավար (կամ ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար)»:

Այսինքն՝ կուսակցության հիմնադիրների թիվը չի համապատասխանում օրենքի պահանջներին կամ հիմնադիր համագումարում չեն ընդունվել օրենքով նախատեսված անհրաժեշտ որոշումները: Հիշեցնենք, որ Արթուր Ղազինյանը նախկինում «Հայաստան» խմբակցության պատգամավոր էր, սակայն հետագայում վայր էր դրել պատգամավորական մանդատը: Վերջերս Ազգային Ժողովի պատգամավոր է ընտրվել նրա եղբայրը՝ Դավիթ Ղազինյանը՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցության ցուցակով: Այսպիսով, նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ կուսակցությունների պետական գրանցման մերժված հայտերի ամբողջական ցանկում ընդգրկված է ընդամենը մեկ քաղաքական ուժ, եւ այդ անձը իրավաբանի ընտանիքից է, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ: 2006 թվականից ԵՊՀ եւ ԵՄ պատվիրակության օժանդակությամբ հիմնադրել եւ ղեկավարում է ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնը:

«Ժողովուրդ» օրաթերթին Արթուր Ղազինյանը հայտնեց հետեւյալը. «Մեր կուսակցությունը՝ «Մեկ Հայաստան»-ը, վաղուց լուծարված է եւ իրավաբանորեն գոյություն չունի: Մենք չենք դիմել ընտրություններին մասնակցելու համար, մենք գրանցման դիմում չենք ներկայացրել եւ, առհասարակ, չունենք այդ խնդիրը»: Նա նաեւ նշեց, որ կուսակցության լուծարման պատճառը կուսակցության կողմից քաղաքական պասիվությունն է եղել:

2023 թվականի ապրիլի 13-ից Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնը զբաղեցնող Անահիտ Մանասյանը վերջին տարիներին պետական համակարգում զբաղեցրել է մի շարք պատասխանատու պաշտոններ: Նա նախկինում եղել է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ, ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի խորհրդական, Արդարադատության ակադեմիայի պրոռեկտոր, ինչպես նաեւ դասավանդում է Երեւանի պետական համալսարանում: «Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է Անահիտ Մանասյանի՝ 2022-2025 թվականների հայտարարագրերը եւ առանձնացրել նրա գույքային դրության, դրամական միջոցների ու եկամուտների վերաբերյալ բոլոր տվյալները: «Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ 2022 թվականին ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնը ստանձնելու պահին Անահիտ Մանասյանն ունեցել է Երեւանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում գտնվող երկու բնակարան: Դրանցից մեկը գտնվում է նրա միանձնյա սեփականության ներքո եւ ձեռք է բերվել 2015 թվականին, իսկ մյուսը համատեղ սեփականություն է, որը ձեռք է բերվել 1995 թվականին: Հայտարարագրի համաձայն՝նա ունեցել է նաեւ 2012 թվականի արտադրության FORD մակնիշի ավտոմեքենա, որը ձեռք է բերել 2017 թվականին:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

«ԼՈՒՅՍ» հիմնադրամը վերլուծել է ՀՀ 2025թ. պետական բյուջեի կատարման հաշվետվությունը: Այսպես. 2025թ.-ին ՀՀ տնտեսական աճի տեմպն արագացել է՝նախորդ տարվա 5.9%-ի դիմաց կազմելով 7.1%: Փաստացի, տնտեսական աճը գերազանցել է ինչպես պետական բյուջեի հիմքում դրված 5.1% կանխատեսումը, այնպես էլ 2026թ. պետական բյուջեի հիմքում դրված մակրոտնտեսական սցենարով վերանայված 5.2% սպասումը: Տնտեսական աճը հիմնականում պայմանավորված է եղել ծառայությունների եւ շինարարության բարձր աճով: Տնտեսության մյուս հիմնական ճյուղերը եւս դրական նպաստում են ունեցել տնտեսական աճին: Սակայն տնտեսական աճի կառուցվածքը շարունակում է պարունակել որոշակի խոցելիություններ՝ սահմանափակելով աճի կայունությունը: Մասնավորապես, շինարարության բարձր աճը զգալիորեն պայմանավորված է եղել հիփոթեքային վարկերի տոկոսավճարների վերադարձի ծրագրի ազդեցությամբ, իսկ արդյունաբերության կառուցվածքում պահպանվել է առանձին ենթաճյուղերից կախվածության բարձր մակարդակը (օրինակ՝ոսկու վերաարտահանման ակտիվացմամբ պայմանավորված, որը թեեւ նվազել է նախորդ տարիների համեմատ): 2025թ. պետական բյուջեի եկամուտների եւ հատկապես հարկային եկամուտների կատարողականը նախորդ տարվա համեմատ բարելավվել է՝ հիմնականում պայմանավորված կանխատեսվածից ավելի բարձր տնտեսական աճով:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

2021 թվականին նախկին պատգամավոր Արմեն Եղիազարյանը, հղում անելով Համաշխարհային բանկի տվյալներին, աղմկահարույց հայտարարություն էր արել՝ պնդելով, որ 2018 թվականին Ադրբեջանից Հայաստան փոխանցվել է շուրջ 211 միլիոն ԱՄՆ դոլար: Տարիներ շարունակ այդ թիվը շրջանառվում էր հանրային դաշտում՝ առաջացնելով բազմաթիվ հարցեր, սակայն որեւէ պետական կառույց մինչ այժմ հստակ պարզաբանում չէր ներկայացրել: «Ժողովուրդ» օրաթերթը, հաշվի առնելով թեմայի հանրային կարեւորությունը, նախ դիմել էր ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն Անդրանիկ Սիմոնյանին՝ պարզելու, թե արդյոք ԱԱԾ-ն ուսումնասիրել է այդ տեղեկությունները, եւ արդյոք գոյություն ունեն տվյալներ Ադրբեջանից Հայաստան իրականացված նման ծավալի ֆինանսական հոսքերի վերաբերյալ: ԱԱԾ-ից ստացված պատասխանը բավական ուշագրավ էր: Գերատեսչությունը հայտնել էր, որ «օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների իրականացման ընթացքում Ադրբեջանի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն 211 միլիոն ԱՄՆ դոլարի փոխանցման վերաբերյալ տվյալներ չի ստացել»: Միաժամանակ ԱԱԾ-ն առաջարկել էր անհրաժեշտ տեղեկատվությունը ստանալու նպատակով դիմել ՀՀ կենտրոնական բանկ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՎԱԿԱՆԻՆ ԹԱՓԱՆՑԻԿ ԵՆ ԵՂԵԼ»

ArmLur.am-ը զրուցել է ՀՀ ԱԺ պատգամավոր Սերգեյ Բագրատյանի հետ:

- Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ներկայացրել է վերջնական արդյունքները, սակայն ընդդիմությունը դժգոհություն է հայտնում՝ պնդելով, որ կիրառվել է վարչական ռեսուրս, իսկ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը ուղղորդված որոշում է կայացրել՝ «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանը խորհրդարան չանցկացնելու նպատակով: Ինչպե՞ս եք մեկնաբանում այս պնդումները:

- «Ուղղորդում» ասվածն ինձ համար անհասկանալի է: Բոլորի աչքի առաջ է տեղի ունեցել քվեների հաշվարկը: Բողոքներ կային երկու ընտրատեղամասի վերաբերյալ, որտեղ նշվում էր, որ զինվորները քվեարկել են տեղամասերի փակվելուց հետո: Ընդդիմությունը դա համարում էր անթույլատրելի եւ բողոք էր ներկայացրել: Արդյունքում երկու տեղամասի, իսկ հետո նաեւ երրորդ տեղամասի արդյունքները ճանաչվեցին անվավեր: ԿԸՀ-ն օրենքով ունի այդպիսի լիազորություն: Եթե որեւէ մեկը գտնում է, որ որոշումը հակասում է օրենքին, ապա դրա գնահատականը պետք է տրվի դատարաններում եւ Սահմանադրական դատարանում:

- ՔՊ-ի ստացած արդյունքը արդյո՞ք ձեր սպասելիքներին համապատասխանում է:

- Ցանկացած քաղաքական ուժ միշտ ցանկանում է ավելի բարձր արդյունք ունենալ, քան ստանում է: Ժողովրդի վստահությունն արտահայտվել է ընտրությունների թվերով: Մեր հանդիպումների ընթացքում տպավորությունն այնպիսին էր, որ ավելի բարձր արդյունք կունենանք, սակայն այսօր ունենք այն արդյունքը, որն արձանագրել է ժողովուրդը:

- Հայաստանի արեւմտյան գործընկերները շտապեցին շնորհավորել Նիկոլ Փաշինյանին, մինչդեռ Ռուսաստանն ու Ադրբեջանը դեռեւս չեն շնորհավորել: Ինչպե՞ս եք մեկնաբանում այս լռությունը:

- Ես ավելի շատ ուշադրություն կդարձնեի այն հանգամանքին, որ ժողովրդավարական եւ զարգացած երկրներն արդեն շնորհավորել են: Դա կարեւոր ազդակ է, որ ընտրական գործընթացը գնահատվել է որպես ժողովրդավարական: Պետք է հաշվի առնել նաեւ, որ վերջնական արդյունքները հրապարակվել են ընդամենը մեկ-երկու օր առաջ, եւ հնարավոր է՝ որոշ երկրներ պարզապես սպասում են պաշտոնական ամփոփմանը: Կարծում եմ՝ ժամանակի ընթացքում նրանք եւս կարտահայտեն իրենց դիրքորոշումը:

-Սակայն Ռուսաստանը նաեւ քննադատել է ընտրությունների ընթացքը՝ խոսելով խախտումների մասին: Նիկոլ Փաշինյանը նախընտրական շրջանում հայտարարում էր, որ պատրաստվում է բարելավել հարաբերությունները Ռուսաստանի հետ: Ինչպե՞ս դա պետք է իրականացվի:

- Կարծում եմ՝ հարաբերությունները պետք է կառուցվեն հիմնականում տնտեսական համագործակցության հիման վրա, այլ ոչ թե քաղաքական հակադրությունների: Հնարավոր է, որ նախընտրական շրջանում որոշ հայտարարություններ կամ ազդակներ եղել են տարբեր ընտրազանգվածների համար, սակայն երկարաժամկետ տեսանկյունից շահավետ է կենտրոնանալ փոխշահավետ տնտեսական հարաբերությունների վրա: Կարծում եմ՝ այդ խնդիրները ժամանակի ընթացքում կարգավորվելու են:

- Ինչպե՞ս եք պատկերացնում հետընտրական գործընթացները: Կարո՞ղ է ընդդիմությունը փողոցային պայքարի ճանապարհով գնալ:

- Յուրաքանչյուր քաղաքական ուժ իրավունք ունի ընտրելու իր մարտավարությունն ու ռազմավարությունը: Իմ անձնական կարծիքով՝ ընդդիմությունը չի գնա լայնածավալ փողոցային գործընթացների ճանապարհով: Ընտրությունները բավականին թափանցիկ են եղել, բազմաթիվ դիտորդներ, վստահված անձինք եւ ընդդիմության ներկայացուցիչներ ներկա են եղել ընտրատեղամասերում: Քվեների հաշվարկի փուլում էական խախտումներ չեն արձանագրվել: Եթե կան մեղադրանքներ, դրանք պետք է հիմնավորվեն փաստերով եւ ապացույցներով: Քաղաքական հայտարարությունները բավարար չեն. անհրաժեշտ են կոնկրետ փաստարկներ, որոնք կվկայեն ընտրական գործընթացի խախտումների մասին:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ԿԸՀ ՆԻՍՏ

Երեկ՝ հունիսի 17-ին, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստում քննարկվեց Ազգային Ժողովի ընտրություններին «Հայաստան» կուսակցությունների դաշինքի պատգամավորի թեկնածու Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն տալու հարցը:

Համապատասխան միջնորդությունը ԿԸՀ էր ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազությունը: Փաստաթղթի համաձայն՝ գլխավոր դատախազությունը խնդրում էր ԿԸՀ-ի համաձայնությունը՝ Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համար: Ծանուցման համաձայն՝ դիմումի քննարկումը նշանակված էր հունիսի 17-ին՝ ժամը 15:00-ին, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստում:

Հիշեցնենք, որ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը ԿԸՀ էր ներկայացրել ընդհանուր առմամբ հինգ պատգամավորի թեկնածուների անձեռնմխելիությունից զրկելու եւ նրանց նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ միջնորդություններ:

Երեկվա նիստում ԿԸՀ-ն բավարարել է դատախազի միջնորդությունը՝ համաձայնություն տվել Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու միջնորդությանը: Ավելի վաղ փաստաբանը նշել է, որ խոսքը 2004 թվականին կառավարության կողմից հաստատված գործարքի մասին է, որը, նրա խոսքերով, երբեւէ չի վիճարկվել եւ կապ չունի Ռոբերտ Քոչարյանի կամ նրա ընտանիքի անդամների հետ: Նա նշել է, որ 2008-ին, երբ Ռոբերտ Քոչարյանն արդեն չէր պաշտոնավարում, նրա որդի Սեդրակ Քոչարյանը ներդրում է կատարել «Մաստեր կլաս» թենիսի համալիրի տարածքում գործող ընկերությունում: Օրբելյանը պնդել է, որ գործարքում որեւէ անօրինականություն չկա:

Դատախազը դիմում էր ներկայացրել ԿԸՀ՝ Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն ստանալու նպատակով: Օրեր առաջ ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի գրասենյակից հայտնել էին, որ նա եռօրյա այցով մեկնում է ՀՀ-ից՝ նշելով, որ այցը կրում է անձնական բնույթ, սակայն իրավապահները «Զվարթնոց» օդանավակայանում թույլ չէին տվել լքել ՀՀ տարածքը:

ԿԸՀ-ն երեկ բավարարեց նաեւ Ղազինյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու եւ ազատությունից զրկելու միջնորդությունը: Նշենք, որ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների իրականացրած միջոցառումների արդյունքում փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցության Երեւանի Արաբկիր վարչական շրջանի գրասենյակում պատասխանատու նշանակված անձինք, ինչպես նաեւ կուսակցության պատգամավորի թեկնածու Դավիթ Ղազինյանը, կուսակցության համակիրների եւ նրանց հետ համագործակցող մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ ընտրողներին խոստացել եւ տվել են ընտրակաշառք: Դեպքի առթիվ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ: Ձերբակալվել են մի շարք անձինք, իրականացվել են խուզարկություններ եւ կատարվել վարույթային այլ գործողություններ: Հակակոռուպցիոն կոմիտեից երեկ ArmLur.am-ին հայտնեցին, որ Դավիթ Ղազինյանը ձերբակալվել է:

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՉԵՆ

«Ռոսսելխոզնադզոր»-ի ղեկավար Սերգեյ Դանկվերտը հայտարարել է, որ հայկական որոշ ապրանքների՝ Ռուսաստան ներմուծման սահմանափակումները պայմանավորված են ոչ թե քաղաքականությամբ, այլ հայտնաբերված խախտումներով: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ Սերգեյ Դանկվերտն այդ մասին հայտարարել է Российская газета-ին տված հարցազրույցում: Նրա խոսքով՝ Հայաստանի խնդիրը արտադրության կազմակերպման եւ դրա նկատմամբ վերահսկողության մեջ է: Դանկվերտն ասել է, որ Հայաստանում աշխատում են շատ փոքր ֆերմերներ, որոնք իրենց արտադրանքն արտահանում են: «Սակայն արտադրության եւ առաքման արանքում ֆիզիկապես բացակայում է ներքին վերահսկման եւ կոոպերացիայի համակարգը: «Մեկ մեքենայում հավաքում են հազարավոր կապ կանաչեղեն, որից հետո կարգավորող մարմինները պետք է ստուգեն այդ հսկայածավալ արտադրանքը: Սա ֆիզիկապես անհնար է»,-ասել է «-Ռոսսելխոզնադզոր»-ի ղեկավարը: Դանկվերտն ընդգծել է, որ արտադրանքի նկատմամբ վերահսկողությունը պետք է տեղի ունենա անմիջապես արտադրության փուլում: Նա հավելել է, որ համակարգի արդյունավետ աշխատանքի համար անհրաժեշտ է կոոպերացիա, արտադրական վերահսկողություն, ինչպես նաեւ արտադրողների միավորման պատասխանատվությունը. «Հենց սա է այսօր պակասում: Դրա համար սահմանափակումների պատճառներն արտադրանքի որակի եւ անվտանգության հարթությունում են, այլ ոչ թե քաղաքականության»: Ռուսաստանը Հայաստանում հունիսի 7-ին կայացած խորհրդարանական ընտրություններին ընդառաջ արգելքներ եւ սահմանափակումներ էր կիրառել հայկական բազմաթիվ ապրանքների ներմուծման նկատմամբ, որոնք շարունակվում են մինչ օրս: Ռուսաստանի կողմից Հայաստանի նկատմամբ ներմուծման այս արգելքների ֆոնին Հայաստանը դիվերսիֆիկացնում է արտահանման շուկաները դեպի Եվրոպական միության եւ այլ շուկաներ: Եվրամիությունն էլ իր հերթին հայտարարել է, որ Ռուսաստանը տնտեսական ճնշումներ է կիրառում Հայաստանի նկատմամբ եւ պատրաստակամություն է հայտնել աջակցել Հայաստանին: ԵՄ-ն հայտնել է Հայաստանին աջակցելու փաթեթի նախապատրաստման մասին, որի շրջանակներում Հայաստանին հրատապ 50 միլիոն եվրոյի ֆինանսական աջակցություն կտրամադրվի:

ՈՉՆՉԱՑՐԵԼ Է ՀՈՒՇԱՐՁԱՆԸ

Համաձայն արբանյակային լուսանկարների վերլուծության՝ 2024թ. ապրիլի 19-ից 2025թ. հուլիսի 15-ն ընկած ժամանակահատվածում ադրբեջանական վարչակարգի կողմից ոչնչացվել է Աստղաշենի Արցախյան ազատամարտում զոհված աստղաշենցի մարտիկների հիշատակը հավերժացնող հուշարձանը, որը կանգնեցվել է 2012թ., այս մասին հայտնում են Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայությունից. «Նույն ժամանակահատվածում ոչնչացվել է նաեւ Աստղաշենի Հայրենական մեծ պատերազմում զոհված աստղաշենցիների հիշատակը հավերժացնող հուշարձանը, այն կանգնեցվել է 1970-ական թվականներին: Մարիա Զախարովան բան չունի՞ ասելու»:

ԳՈՐԾՈՒՂՈՒՄ Է ՌՈՒՍԱՍՏԱՆ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը որոշում է ստորագրել, համաձայն որի՝ արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը 2026 թվականի հունիսի 23-26-ը կգործուղվի Ռուսաստանի Դաշնություն՝ Սանկտ Պետերբուրգ քաղաք: ArmLur.am-ի ուսումնասիրած՝ վարչապետի N 520-Ա որոշման համաձայն՝ նախարարի այցի նպատակն է մասնակցել Պետերբուրգյան միջազգային իրավաբանական 14-րդ համաժողովին: Փաստաթղթից ArmLur.am-ը տեղեկացավ նաեւ, որ Սրբուհի Գալյանի ճանապարհածախսի եւ օրապահիկի ծախսերը կկատարվեն ՀՀ 2026 թվականի պետական բյուջեով արդարադատության նախարարությանը հատկացված միջոցների հաշվին, իսկ գիշերավարձի ծախսերը կհոգա հրավիրող կողմը: Վարչապետի որոշմամբ՝ արդարադատության նախարարը գործուղումից վերադառնալուց հետո եռօրյա ժամկետում պետք է ներկայացնի Ռուսաստանի Դաշնություն կատարած այցի արդյունքների վերաբերյալ հաշվետվություն՝ սահմանված կարգի համաձայն: Հիշեցնենք, որ Պետերբուրգյան միջազգային իրավաբանական համաժողովը համարվում է իրավական ոլորտի հեղինակավոր միջազգային հարթակներից մեկը, որտեղ քննարկվում են արդարադատության, իրավունքի եւ միջազգային համագործակցության արդիական հարցեր:

Ա. Վ.

ՍԿՍԵԼ Է ՆԱՎԹԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ

Իրանական լցանավերը վերջին երկու ամսվա ընթացքում առաջին անգամ սկսել են հում նավթ արտահանել այն բանից հետո, երբ Վաշինգտոնը եւ Թեհրանը հայտարարել են շրջանակային համաձայնագրի մասին, որը նախատեսում է, ի թիվս այլ բաների, ԱՄՆ-ի կողմից իրանական նավահանգիստների շրջափակման վերացում: Այս մասին հաղորդում է CNN հեռուստաալիքը: Նշվում է, որ ըստ TankerTrackers վերլուծական ընկերության, որն զբաղվում է ծովային փոխադրումների դիտարկմամբ, իրանական լցանավերն արդեն հաջողությամբ դուրս են բերել նավթի երկու խմբաքանակ: Ընկերության տվյալներով, որոնք հաստատվում են արբանյակային լուսանկարներով, Իրանի ազգային լցանավային ընկերության առնվազն երկու գերլցանավեր, որոնք փոխադրում են 3,8 միլիոն բարել հում նավթ, անցել են ԱՄՆ ռազմածովային շրջափակման գիծը: ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հունիսի 15-ին հայտարարել էր, որ Հորմուզի նեղուցը կրկին բաց է համաձայնեցված հուշագրի պայմաններին համապատասխան, բայց ավելի ուշ փոխել էր ժամկետները՝ հայտարարելով, թե նեղուցը կրկին կբացվի հունիսի 19-ին Ժնեւյցարիայում փաստաթղթի պաշտոնական ստորագրումից հետո:

G7 ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎ

ԽՈՍՏԱՆՈՒՄ ԵՆ «ԱՆՎԵՐԱՊԱՀ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ՈՒԿՐԱԻՆԱՅԻՆ

Ֆրանսիայի Էվիան քաղաքում ընթացող G7 գագաթնաժողովի երրորդ եւ վերջին օրը շարունակվում է: Նախորդ օրը՝ երեկոյան, անդամ երկրների առաջնորդները համատեղ հայտարարությամբ վերահաստատել են իրենց «անվերապահ աջակցությունը Ուկրաինային՝ իր ազատության, ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության պաշտպանության գործում»:

Հայտարարության մեջ ընդգծվում է, որ Ուկրաինայի դիմադրողականությունը թույլ է տվել նոր դինամիկա ստեղծել ռազմաճակատում, եւ այդ ընթացքը պահպանելու համար G7 երկրները կավելացնեն հակաօդային պաշտպանության միջոցների, միջամտող հրթիռների եւ հեռահար զինատեսակների մատակարարումները: Բացի այդ, առաջնորդները նշել են, որ ԱՄՆ-Իրան վերջին համաձայնագիրը, որը վերաբերում է Հորմուզի նեղուցի վերաբացմանը, կարող է դառնալ հնարավորություն՝ «ուժեղացնելու ճնշումը Ռուսաստանի պատերազմական տնտեսության վրա»: Այդ համատեքստում G7-ը նախատեսում է խստացնել պատժամիջոցները՝ ներառյալ նավթի եւ գազի ոլորտները:

Չինաստանի գործոնը՝ տնտեսական քննարկումների կենտրոնում

Գագաթնաժողովի շրջանակում քննարկվել է նաեւ համաշխարհային տնտեսական աճի եւ «հավասարակշռված, կայուն զարգացման» հարցը՝ Միջազգային արժույթի հիմնադրամի (IMF) եւ Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության (OECD) մասնակցությամբ: Գլխավոր մտահոգությունը շարունակում է մնալ Չինաստանը: Ըստ զեկույցների՝ Պեկինի արտահանման վրա հիմնված տնտեսությունը նպաստում է գլոբալ անհավասարակշռություններին, իսկ OECD-ի տվյալներով՝ Չինաստանը իր արտադրությունը սուբսիդավորում է մինչեւ ութ անգամ ավելի շատ, քան զարգացած երկրները:

G7-ի ներկայացուցիչները նշել են, որ որոշ երկրներ արտադրում են չափազանց շատ, որոշները՝ քիչ, եւ այս անհավասարակշռությունը «վտանգավոր է համաշխարհային տնտեսության համար»: Այս հարցը նախատեսվում է շարունակել քննարկել նաեւ G20 ձեւաչափում:

Զելենսկի-Թրամփ հանդիպման հարցը

Գագաթնաժողովում դեռ բաց է մնում Ուկրաինայի նախագահ Վոլոդիմիր Զելենսկու եւ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի հնարավոր հանդիպման հարցը: Չնայած սպասումներին, մինչ այժմ երկու առաջնորդների միջեւ պաշտոնական հանդիպում չի կայացել, բացառությամբ կարճ շփման՝ Ուկրաինային նվիրված աշխատանքային նիստի ժամանակ: Ուկրաինական կողմի տեղեկություններով՝ հնարավոր է, որ հանդիպումը տեղի ունենա գագաթնաժողովի վերջին օրը: Միեւնույն ժամանակ, Թրամփը նախատեսում է մասնակցել Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի կազմակերպած ընթրիքին Վերսալի պալատում, որը նվիրված է ԱՄՆ անկախության 250-ամյակին:

Գերմանիա-Ուկրաինա պաշտպանական համագործակցություն

Գերմանական HENSOLDT ընկերությունը եւ ուկրաինական Fire Point-ը ստորագրել են փոխըմբռնման հուշագիր՝ նոր հակաբալիստիկ օդային պաշտպանության համակարգի մշակման համար: Ծրագրի շրջանակում HENSOLDT-ը կզբաղվի ռադարային համակարգերի արտադրությամբ եւ ինտեգրմամբ, իսկ Fire Point-ը կլինի գլխավոր կապալառուն եւ պատասխանատու՝ համակարգի նախագծման եւ FP-7 հրթիռների փորձարկման համար:

Վոլոդիմիր Զելենսկին ամիսներ շարունակ կոչ է անում եվրոպական երկրներին զարգացնել սեփական հակահրթիռային պաշտպանական համակարգերը՝ ընդգծելով, որ արտադրական հնարավորությունները կան, սակայն գործընթացը դանդաղեցնում են թույլտվությունների բացակայությունը ԱՄՆ-ից:

ԱՄՆ-Իրան համաձայնագրի հիմնական կետերը

G7 շրջանակում շրջանառված տեղեկատվության համաձայն՝ Իրանը համաձայնել է երբեք չարտադրել միջուկային զենք՝ պատժամիջոցների ամբողջական չեղարկման դիմաց: Համաձայնագիրը նախատեսում է պատերազմի դադարեցում բոլոր ճակատներում, այդ թվում՝ Լիբանանում, ինչպես նաեւ երկու կողմերի միջեւ ինքնիշխանության հարգում, Հորմուզի նեղուցում նավարկության ազատության վերականգնում եւ Իրանի սառեցված ակտիվների ապասառեցում: Վերջնական համաձայնագիրը պետք է հաստատվի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի պարտադիր բանաձեւով:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀՐԱՏԱՊ ՓԱԹԵԹ Է ՄՇԱԿՈՒՄ

Եվրահանձնաժողովը (ԵՀ) հրատապ կարգով պատրաստում է Հայաստանի հետ առեւտրային հարաբերությունները բարելավելու միջոցառումների փաթեթ՝ Ռուսաստանի կողմից տնտեսական սահմանափակումների պատճառով: Այդ մասին հայտնել է Financial Times (FT) թերթը՝ հղում անելով չորս աղբյուրի, հաղորդում է ՏԱՍՍ-ը: Պարբերականի տվյալներով՝ Բրյուսելում մշակում են այսպես կոչված ինքնավար առեւտրային միջոցներ, որոնք կնվազեցնեն հայկական պարենային եւ գյուղատնտեսական արտահանման մաքսատուրքերը:

Ինչպես թերթին հայտնել է ԵՀ ներկայացուցիչ Օլոֆ Գիլը, Եվրահանձնաժողովը կառաջարկի ինքնավար առեւտրային միջոցներ՝ օգնելու ավելի շատ հայկական ձեռնարկությունների մուտք գործել ԵՄ-ում շուկայական նոր հնարավորություններ եւ աջակցել երկրի տնտեսությանը այնտեղ, որտեղ այն ամենաշատն է տուժել:

«Հիմա ակտիվանալու եւ նրանց աջակցելու ժամանակն է, ցույց տալու, որ մենք կարող ենք վստահելի գործընկեր լինել»,- ասել է FT-ի աղբյուրներից մեկը: Միջոցառումները, որոնք պահանջում են ԵՄ անդամ պետությունների մեծամասնության եւ Եվրախորհրդարանի հավանությունը, կընդգրկեն մոտ 20 կատեգորիայի ապրանքների մեծ մասը, որոնց արժեքը կազմում է տարեկան մոտ 420 միլիոն եվրո, նշվում է հրապարակման մեջ:

Այնուամենայնիվ, աղբյուրների վկայությամբ՝ Հայաստանի արտահանման մի շարք ապրանքներ խնդիրներ են առաջացնում համայնքի պաշտոնյաների համար: Սա վերաբերում է նախեւառաջ կոնյակին՝ հայկական հիմնական արտահանվող ապրանքներից մեկին, հաշվի առնելով կոնյակի արտադրության կարեւորությունը Ֆրանսիայի համար: Խոսքը նաեւ ծովային ելք չունեցող երկրից Թուրքիայի կամ Վրաստանի տարածքով շուտ փչացող ապրանքների տեղափոխման բարդության մասին է:

Ինչպես ավելի վաղ հայտնել էր ԵՄ դիվանագիտության ղեկավար Կայա Կալլասը Լյուքսեմբուրգում համայնքի ԱԳ նախարարների հանդիպման եւ Հայաստանի ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հետ նրանց բանակցությունների արդյունքներով, Եվրամիությունը ՌԴ-ի կողմից տնտեսական սահմանափակումներին ի պատասխան կպատրաստի Հայաստանին աջակցության ծրագիր, ինչպես նաեւ խորհրդականների առաքելություն կուղարկի Երեւանին աջակցելու համար:

Ավելի վաղ ռուսական կողմը, բացահայտված խախտումների պատճառով, սահմանափակել էր հայկական արտադրանքի մի ամբողջ շարքի ներկրումը երկիր՝ հանքային ջրերից եւ ոգելից խմիչքներից մինչեւ բանջարեղեն եւ մրգեր:

ՆԱՀԱՆՋ ՉԻ ԼԻՆԻ

Լիբանանից նահանջ չի լինի ո՛չ ուրբաթ օրը, եւ ո՛չ էլ ուրբաթ օրվանից հետո: Այս մասին ասել է Իսրայելի ֆինանսների նախարար Բեցալել Սմոտրիչը: «Լիբանանից նահանջ չի լինի՝ ոչ ուրբաթ օրը, եւ ոչ էլ ուրբաթ օրվանից հետո: Մենք պահպանում ենք Իսրայելի պաշտպանության բանակի գործողությունների լիարժեք ազատությունը Լիբանանում»,- ասել է Սմոտրիչը: Սմոտրիչը նշել է, որ Իսրայելը չի լքի Լիբանանը, քանի դեռ «Հեզբոլլահը» զինաթափված չէ: «Մենք կմնանք Հարավային Լիբանանում: Մենք կխորացնենք մեր ներկայությունը այնտեղ: Քանի դեռ «Հեզբոլլահը» զինաթափված չէ, մենք այնտեղ կմնանք երկարաժամկետ հիմունքներով՝ այնքան տարի, որքան անհրաժեշտ լինի»,- հայտնել է նախարարը:

458 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ

ԽԱԽՏՈՒՄՆԵՐ Է ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ

Դատախազությունը 457,79 հա մակերեսով հողամասն «Արարատցեմենտ» ընկերությանը վարձակալության իրավունքով տրամադրելու պետական գրանցման գործընթացում հայտնաբերել է մի շարք խախտումներ: Այս մասին հայտնում են ՀՀ դատախազությունից:

Դատախազը, պետական շահերի պաշտպանության իր լիազորություններն իրականացնելու շրջանակներում հայտնաբերելով առերեւույթ հանցանքի հատկանիշներ, 2026 թվականի հունիսի 16-ին հանցանքի մասին հաղորդում է ներկայացրել Հակակոռուպցիոն կոմիտե: Միեւնույն ժամանակ, վարձակալության իրավունքի պետական գրանցման գործընթացում հայտնաբերված խախտումների հիմքով՝ դատախազությունը հայցադիմում է ներկայացրել Վարչական դատարան՝ 457,79 հա հողամասի նկատմամբ «Արարատցեմենտ» ընկերության անվամբ կատարված վարձակալության իրավունքի պետական գրանցումն առոչինչ ճանաչելու վերաբերյալ:

Հիշեցնենք, որ Գլխավոր դատախազությունը «Արարատցեմենտ» ընկերության մասնավորեցման, «Արարատցեմենտ» ընկերության 74,1 հա մակերեսով հողամասերի, «Արարատցեմենտ» ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող՝ «Ոսկե բանալի» առողջարանի ձեռքբերման գործընթացներում եւս հայտնաբերել է մի շարք խախտումներ: Հայտնաբերված խախտումների հիմքով դդատախազությունը հանցանքի մասին հաղորդումներ է ներկայացրել Հակակոռուպցիոն կոմիտե եւ հայցադիմումներ՝ իրավասու դատարան:

Գլխավոր դատախազությունը 2026 թվականի մայիսի 5-ին գրություն է հասցեագրել ՀՀ Կառավարություն՝ առաջարկելով քննարկել ընկերությունում առկա խախտումները եւ դրանց հետեւանքները վերացնելու նպատակով պատշաճ վարչարարություն իրականացնելու, այդ թվում, օրինակ, ընկերությունում ժամանակավոր կառավարիչ նշանակելու նպատակահարմարությունը:

«Արարատցեմենտ» ՓԲ ընկերությանը սեփականության կամ վարձակալության իրավունքով պատկանող այլ գույքերի ձեռքբերման իրավաչափությունները պարզելու նպատակով դատախազության ուսումնասիրություններն ընթացքի մեջ են:

ԼՈՒՐԵՐ

ԱՎԵԼԻ ՔԱՆ 60 ԳՐԱՄ ՄԵԹԱՄՖԵՏԱՄԻՆ

Քրեական ոստիկանության թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի վարչության ծառայողները տեղադրելու միջոցով թմրանյութ իրացնելու վերաբերյալ հերթական տեղեկությունն իրացրին հունիսի 13-ին: Ժամը 22:50-ին մայրաքաղաքի Ուլնեցու փողոցում թմրամիջոց տեղադրելու պահին իրավապահները ձերբակալեցին Երեւանի բնակիչ 31-ամյա տղամարդուն: Նա տեղափոխվեց Համայնքային ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին, որտեղ կատարված խուզարկությամբ նրա մոտ հայտնաբերվեց կպչուն ժապավենով 36 փաթեթ: Դրանց ընդհանուր քաշն ավելի քան 42 գրամ էր, իսկ ըստ տղամարդու՝ փաթեթներում մեթամֆետամին էր: Տղամարդը նաեւ հայտնեց, որ երեք փաթեթ արդեն տեղադրել է, ու նույն թմրամիջոցով փաթեթներ ունի նաեւ տանը: Քանաքեռ-Զեյթունի վարչական շրջանի քննչական բաժնում նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում կատարված գործողություններով տեղադրված փաթեթներն ու տանը եղած մոտ 15 գրամ մեթամֆետամինը նույնպես հայտնաբերվեցին եւ առգրավվեցին: Նախաքննությունը շարունակվում է:

ՎԵՐԱԴԱՐՁՎԵԼ Է

Գլխավոր դատախազությունը 2025 թվականի դեկտեմբերի 26-ին հայցադիմում էր ներկայացրել Հակակոռուպցիոն դատարան՝ ընդդեմ Հիմնադրամի, երրորդ անձ՝ ՓԲ ընկերության՝ հողամասի կառուցապատման իրավունքը հարկադիր դադարեցնելու պահանջով: Հակակոռուպցիոն դատարանի 2026 թվականի հունիսի 15-ի վճռով՝ հաստատվել է Գլխավոր դատախազության եւ Հիմնադրամի միջեւ կնքված հաշտության համաձայնությունը, որով Հիմնադրամը ՀՀ տիրապետությանն է վերադարձրել Տավուշի մարզի Դիլիջան համայնքում գտնվող՝ 67 հա մակերեսով «հատուկ պահպանվող տարածքներ» նպատակային եւ «բնապահպանական» գործառնական նշանակությամբ հողամասը: Հողամասի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը 4 միլիարդ 578 միլիոն 981 հազար դրամ է (12 միլիոն 436 հազար ԱՄՆ դոլար): Վճիռը մտել է օրինական ուժի մեջ:

ԽՈՍՏՈՎԱՆԵԼ Է ԱՐԱՐՔԸ

Հունիսի 4-ի առավոտյան՝ ժամը 6-ին, ՆԳՆ օպերատիվ կառավարման կենտրոն զանգած քաղաքացին հայտնել էր, որ մայրաքաղաքի Բաշինջաղյան փողոցում խանութի դուռը կոտրել ու գողացել են դրամարկղի ողջ գումարը: Հաղորդումը փոխանցվեց Համայնքային ոստիկանության Մաշտոցի բաժին, որտեղից օպերատիվ խումբը մեկնեց դեպքի վայր: Անհատ ձեռնարկատերը հայտնեց, որ դրամարկղից տարել են 700 հազար դրամ: Նրանից ընդունվեց հաղորդում, ու կազմված փաստաթղթերը ներկայացվեցին Աջափնյակ եւ Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժին: Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվեց, որ գողությունը կատարել է մայրաքաղաքի Շիրազի փողոցի բնակիչ 21-ամյա մի երիտասարդ: Իրավապահների բացատրական աշխատանքի արդյունքում հունիսի 9-ի առավոտյան երիտասարդը ներկայացավ բաժին եւ խոստովանեց արարքը: Ձեռնարկվում են միջոցներ՝ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ: Նախաքննությունը շարունակվում է:

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ՄԱՐՄԻՆԸ

Երեկ՝ ժամը 9:30-ի սահմաններում, Փամբակ գետում՝ ենթադրյալ դեպքի վայրից մոտ 500 մ հեռավորության վրա, հայտնաբերվել է հունիսի 15-ից որոնվող 2018 թվականի ծնված Նարե Մարտիրոսյանի մարմինը: Այս մասին հայտնում են ՆԳՆ-ից Հիշեցնենք, որ հունիսի 15-ին՝ ժամը 14:45-ին, Լոռու մարզային օպերատիվ կառավարման կենտրոն ահազանգ էր ստացվել երեխայի խեղդվելու վերաբերյալ: Այնուհետեւ ժամը 17:05-ին ստացվել էր մեկ այլ ահազանգ, որ 7 եւ 13 տարեկան երկու երեխա Վանաձոր քաղաքի Նարեկացի փողոցի հասցեներից մեկից դուրս են եկել եւ չեն հասել նախատեսված վայր: Որոնողական աշխատանքները տեղում համակարգում է ՆԳՆ փրկարար ծառայության տնօրեն-ՆԳ նախարարի տեղակալ Արամ Ղազարյանը: Ներգրավված են փրկարար ծառայության, ոստիկանության ծառայողներ, կամավորներ, ջրասուզակներ, անօդաչու թռչող սարքեր, օգտագործվում են նաեւ նավակներ ու այլ տեխնիկական միջոցներ:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

55-ԱՄՅԱ ԿԻՆԸ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է

Հունիսի 13-ին՝ ժամը 17:30-ին, ՆԳՆ օպերատիվ կառավարման կենտրոն է զանգահարել Երեւանի քաղաքապետարանի հասարակական կարգի պահպանության ծառայող մի կին: Նա հայտնել է, որ ինքը հսկիչ է, եւ Այվազովսկու փողոցում կանգնած հանրային տրանսպորտում իրենց պարտականությունները կատարելիս երեք հոգի հրմշտել են իրեն ու գործընկերուհուն, հարվածել ու հայհոյել: Համայնքային ոստիկանության Էրեբունու բաժնից շտապ մեկնել է օպերատիվ խումբ:

Պարզվել է, որ ահազանգող տեսուչն ու նրա գործընկերուհին, վարչարարություն կատարելու համար, փորձել են նույնականացնել տոմս չունեցող անձանց, սակայն ուղեւորներից մեկը՝ Մասիս քաղաքի բնակիչ 55-ամյա մի կին, հարվածել է նույնականացման սարքին, քաշել հսկիչի մազերից, հնչեցրել սեռական բնույթի հայհոյանքներ ու փորձել հարվածել՝ կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը: Իսկ մեկ այլ ուղեւոր՝ Երեւանի բնակիչ 51-ամյա տղամարդ, հրմշտել եւ քաշքշել է տեսուչներին ու պահանջել շարունակել ուղեւորությունը:

Համայնքային ոստիկանները ձերբակալել են 55-ամյա կնոջը: Կազմված փաստաթղթերի հետ նա ներկայացվել է Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժին: Հանգամանքները պարզվում են:

ԸՆՏՐԱԿԱՇԱՌՔԻ 125 ՎԱՐՈՒՅԹ

Հակակոռուպցիոն կոմիտեում փետրվարի 7-ից մինչ օրս ընտրական հանցագործությունների վերաբերյալ նախաձեռնվել է 125 քրեական վարույթ՝ ընտրակաշառք տալու եւ ստանալու, ընտրակաշառքի միջնորդության, ընտրության ժամանակ բարեգործության արգելքը խախտելու եւ դրանց հետ համակցված այլ հանցագործությունների դեպքերի առթիվ: Նշված քրեական վարույթներից՝ 66-ով ձերբակալվել է 227 անձ, քրեական հետապնդում է հարուցվել 248 անձի նկատմամբ, 15 մեղադրյալի նկատմամբ հայտարարվել է հետախուզում: Մեղադրյալներից՝ 108-ի նկատմամբ ընտրվել են անազատության հետ կապված՝ կալանք (55) եւ տնային կալանք (53) խափանման միջոցներ, 122-ի նկատմամբ՝ այլընտրանքային խափանման միջոցներ: 66 քրեական վարույթով իրականացվել են բազմաթիվ վարութային գործողություններ, այդ թվում՝ հարցաքննվել է 300-ից ավելի անձ, խուզարկություններ են կատարվել մի շարք գրասենյակներում: 21 վարույթով նախաքննությունը՝ 90 անձի վերաբերյալ, ավարտվել է մեղադրական եզրակացություն կազմելով դատարան ուղարկելու համար:

● *Հանրապետությունում հունիսի 15-ից 16-ը գրանցվել է զենք-զինամթերք կամավոր հանձնելու 2 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԴԵՂՁԻ ԱՅԳՈՒ ՓՈԽԱՐԵՆ ԿՈՐՈՒՅՈԿԻ ԱՅԳԻՆԵՐ

ԽՍՀՄ ժամանակ բերքի համար լավագույն տարիներին Նոյեմբերյանի դեղձի այգիները մինչեւ 30 հազար տոննա դեղձ էին տալիս: Հիմա Դեբեդի հովտում դեղձի քիչ այգիներ են մնացել: Պատճառն այն է, որ Դեբեդի հովտում բարձր խոնավության պատճառով Նոյեմբերյանի դեղձի այգիները 7 անգամ պետք է թունաքիմիկատներով մշակել, իսկ թունաքիմիկատները թանկ արժեն: Դեղձի այգիներին փոխարինել են կորոլյոկի այգիները, որոնց թունաքիմիկատներ սրսկում են 1-2 անգամ: Նոյեմբերյանցի այգեգործները հայտնեցին, որ մինչեւ հիմա կորոլյոկի իրացման խնդիրներ չեն եղել, բերքը այգեգործներից մեծ քանակով գնում են չիր սարքելու նպատակով:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՉԵՆ ՀԱՅՏՆՈՒՄ

Հունիսի 4-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել. «Ենոքավան-Ջուջեւան ավտոճանապարհի երկարությունը որքա՞ն է. դրանից քանի՞ կիլոմետրը ե՞րբ, ինչքա՞ն գումարով է կառուցվել, մնացած հատվածը ե՞րբ է կառուցվելու»: Տավուշի մարզպետի աշխատակազմից պատասխանել են՝ «հարցի վերաբերյալ առաջարկում ենք դիմել ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություն»: Մարզպետարանում այդ ճանապարհի մասին տեղեկատվություն չեն տրամադրել:

Մայիսի 30-ին Ոսկեպար գյուղում նախընտրական քարոզչության ժամանակ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, որ Ադրբեջանի հետ սահմանազատումը շարունակվելու է: Սահմանազատման շարունակության դեպքում Կիրանց-Ոսկեպար ճանապարհի առանձին հատվածներ, ամենայն հավանականությամբ,կհանձնվեն Ադրբեջանին: Այդ ճանապարհի այլընտրանքային ուղին Ենոքավան-Կարմիրգյուղ-Ջուջեւան ճանապարհն է, որի միայն մի փոքր մասն է շահագործման ենթակա: 2024թ. պետական բյուջեի ծրագրով ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության պատվիրատվությամբ իրականացվել են՝ 6.3 կմ երկարությամբ՝ (Մ-4) - Ենոքավան-Կարմիրգյուղ (գյուղատեղի) - (Հ-58) հանրապետական նշանակության ավտոճանապարհի (Ենոքավան տանող) հատվածի հիմնանորոգման աշխատանքները: Աշխատանքներն իրականացրել է «Ճանապարհ» ՍՊԸ-ն: Այդ 6.3 կմ հատվածը համարվում է Մ-4-Ենոքավան-Կարմիր գյուղ-Հ-58 ճանապարհի սկզբնամաս, մնացած՝ 65.5 կմ հատվածի վերականգնման համար հաստատված ծրագիր չկա: Պետբյուջից 642 միլիոն դրամ է ծախսվել 6.3 կմ հատվածի հիմնանորոգման համար, անցել է 2 տարի, սակայն այդ ճանապարհի շարունակությունը կառուցված չէ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՁԱԳԱՆՔԵԼ Է

ՆՊԱՏԱԿԸ ԴԵՊԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱՓՈԽԵԼԸ Չէ

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանն արձագանքել է Ռուսաստանի Դաշնության «Ռոսսելխոզնադզոր»-ի ղեկավար Սերգեյ Դանկվերտի հայտարարությանն այն մասին, թե հայկական կողմն իր ղեկավարած կառույցի կողմից ուղարկված նամակներն անպատասխան է թողնում:

Պապոյանը բացառել է, որ ռազմավարական գործընկեր Ռուսաստանի Դաշնության պետական որեւէ մարմնից իր գլխավորած նախարարությունը ստանա նամակ, որին ոչ միայն չպատասխանի, այլեւ ըստ պատշաճի ուշադրություն չդարձնի կամ էլ համապատասխան արձագանք չհնչեցնի:

ՀՀ էկոնոմիկայի նախարարն այս մասին հայտարարել է «Արմենպրես»-ի թղթակցին տված հարցազրույցում՝ վստահեցնելով, որ նման բան չի կարող լինել, քանի որ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը ոչ մի նամակ անպատասխան չի թողնում՝ հատկապես այնպիսի պետության մարմնից, որի հետ Հայաստանը ռազմավարական գործընկերություն ունի:

«Ես բացառում եմ դա. ենթադրում եմ՝ այդ մեկնաբանության կամ տեղեկատվության մեջ որոշակի անհասկացվածություն կա: Ես բացառում եմ, որ մենք Ռուսաստանի Դաշնության մեր որեւէ գործընկեր կառույցից ստանայինք նամակ եւ անպատասխան թողնեինք: Մենք շատ ուշադիր նորից նայել ենք ամբողջ համակարգում, այդպիսի չպատասխանած նամակ մենք չունենք: Ես բացառում եմ, որ ռազմավարական գործընկեր Ռուսաստանի Դաշնության պետական որեւէ մարմնից մենք ստանայինք նամակ եւ այդ նամակին ոչ միայն չպատասխանեինք, այլ նաեւ ըստ պատշաճի ուշադրություն չդարձնեինք կամ համապատասխան արձագանք չհնչեցնեինք»,- վստահեցրել է Գեւորգ Պապոյանը:

Էկոնոմիկայի նախարարը նաեւ նշել է, որ միայն առաջիկա մեկ ամսվա ընթացքում երկու այց կկատարի Ռուսաստանի Դաշնություն՝ հանդիպելու տարբեր գործընկերների հետ:

«Նախատեսված են հանդիպումներ երկու տարբեր գործընկերների հետ: Այդ հարցերը կլուծենք, կքննարկենք, որովհետեւ ես կարծում եմ, որ բոլոր հարցերը հնարավոր է եւ պետք է քննարկել սեղանի շուրջ, եւ բոլոր հարցերը հնարավոր է լուծել ՌԴ-ի հետ համակարգված աշխատանքի արդյունքում: Այդուհանդերձ, չեմ բացառում, որ գործընկերների կողմից կան բարձրացված հարցեր, որոնք դեռ պատշաճ պատասխան, միգուցե, իրենք չեն ստացել. պետք է տեսնել, թե որոնք են այդ հարցերը, բերել էկոնոմիկայի նախարարության դաշտ եւ լուծել դրանք»,- ընդգծել է Պապոյանը:

Անդրադարձ կատարելով վերջին շրջանում Ռուսաստանի կողմից Հայաստանում արտադրվող բազմաթիվ ապրանքների ներմուծման նկատմամբ տնտեսական սահմանափակումներին եւ հայ տնտեսվարողների ու արտահանողների գործունեության վրա դրանց ազդեցությանը՝ Գեւորգ Պապոյանը շեշտել է, որ էկոնոմիկայի նախարարությունն ակտիվ աշխատում է մասնավոր բիզնեսի հետ եւ որոշակիորեն հաջողվել է դիվերսիֆիկացնել Հայաստանից արտահանումները:

«Մի շարք ապրանքային ուղղություններով դեպի Ռուսաստան արտահանում արակտիկորեն դադարեցվել է, եւ դա որոշակի շոկային իրավիճակ է ստեղծել, սակայն պետք է նշել, որ էկոնոմիկայի նախարարությունը ակտիվ աշխատում է մասնավոր բիզնեսի հետ, եւ որոշակիորեն եւ էական չափով մեզ հաջողվել է արտահանումը դիվերսիֆիկացնել»,-ասել է էկոնոմիկայի նախարարը:

Նրա խոսքով՝ եթե անցած տարվա հունիսի 1-15-ն ընկած ժամանակահատվածում կոնկրետ ապրանքային ուղղություններով, որոնք այս պահին սահմանափակման տակ են, Հայաստանից արտահանումը մոտավորապես 2300-2400 տոննայի շրջանակում էր, որի 90 եւ ավելի տոկոսը՝ Ռուսաստանի Դաշնություն, այսօր այդ նույն ապրանքային ուղղություններով ՀՀ-ից արտահանումը կազմում է մոտավորապես 1900 տոննա:

«Այո ունենք նվազում, բայց այդ նվազումը այն ծավալով չէ, որը կար, այսինքն՝ Ռուսաստան արտահանվող ապրանքների մեծ մասը հիմա գնում է դեպի այլ երկրներ՝ եվրոպական երկրներ, Ուկրաինա, Վրաստան եւ այլն. աշխարհագրություն ավելի լայն է: Այս առումով պետք է նշել, որ խնդիրներ կան, բայց խնդիրները այն ծավալով չեն, որը ենթադրվում էր, այսինքն՝ փաստացի 70 եւ ավելի տոկոսը պարզապես արտահանվում է այլ երկրներ»,-նշել է Գեւորգ Պապոյանը:

Ինչ վերաբերում է այս իրավիճակում հայ տնտեսվարողներին եւ արտահանողներին օգնելու ուղղությամբ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվող քայլերին, Պապոյանը հայտնել է, որ բիզնեսին աջակցելու համար արդեն իսկ մշակվել են մի շարք ծրագրեր:

«Մասնավորապես, արտահանման ժամանակ ամեն կիլոգրամի, ամեն հատի համար կամ ամեն լիտրի համար կոնկրետ աջակցություն ենք տրամադրում: - Մաքսատուրքերից ենք ազատել. պետությունն է վճարում դրանք: Եվ երրորդը՝ հատկապես ջերմատնային բիզնեսը, գյուղացիական տնտեսությունները, ինտենսիվ այգիները վարկային խնդիրներ ունեին, եւ հիմա Կառավարություն ենք ներկայացրել ծրագրեր, որոնցով վարկային միջոցներով նրանց կաջակցենք: Նկատի ունեմ, որոշ դեպքերում վարկային տոկոսադրույքների սուբսիդավորում, որոշ դեպքերում վարկերի մարման ժամկետների երկարաձգում, որոշ դեպքերում արտոնյալ ժամկետների երկարաձգում, արտոնյալ վարկավորման պայմաններ եւ այսպես շարունակ: Սրանք այն միջոցառումներն են, որոնք պետք է որ նպաստեն նրան, որ մենք գանք այն թվին, որը եղել է նախորդ տարի: Իհարկե, նաեւ հույս ունենք, որ Ռուսաստանի Դաշնության հետ կապված հարցադրումները կլուծվեն, եւ մենք կշարունակենք մեծ ծավալներով արտահանել նաեւ Ռուսաստան»,-շեշտել է էկոնոմիկայի նախարարը:

Գեւորգ Պապոյանը խոսել է նաեւ ռուսական սահմանափակումների ֆոնին Եվրոպական միության կողմից այս ոլորտում Հայաստանին առաջարկվող աջակցության ու հայ արտահանողների համար տնտեսական նոր հնարավորությունների բացման մասին՝ բարձր գնահատելով այդ տեսանկյունից Եվրամիության մոտեցումները:

«Շատ ուրախալի է, որ մենք եվրոպական գործընկերների աջակցությունն ենք այս օրերին ստանում այս բարդ իրավիճակում եւ սա շատ կարեւոր է: Մեր նպատակն է նաեւ, բնականաբար, մեր արտահանումը դիվերսիֆիկացնել, այսինքն՝ մենք չենք ուզում արտահանել միայն Եվրոպա, ցանկանում ենք արտահանել նաեւ Մերձավոր Արեւելք, Չինաստան, ասիական շուկաներ, Ռուսաստանի Դաշնություն. բոլոր շուկաները մեզ համար կարեւոր եւ թիրախային են: Իհարկե, մենք բարձր ենք գնահատում ԵՄ աջակցությունը, բայց, այնուամենայնիվ, ես ուզում եմ նշել, որ մեր նպատակը դեպի Ռուսաստան արտահանումը դեպի եվրոպական ուղղություն տեղափոխելը չէ»,-ընդգծել է Պապոյանը: Նա հույս է հայտնել եւ համոզվածություն արտահայտել, որ հայ-ռուսական բարձր մակարդակի քաղաքական, տնտեսական, միջանձնային բոլոր կապերն իրենց դերակատարումն, այնուամենայնիվ, ունենալու են եւ ռուսական շուկան վերաբացվելու է Հայաստանի համար:

«Ես այլ կերպ չեմ պատկերացնում երկու ռազմավարական գործընկեր պետությունների հարաբերությունները: Այո, հիմա կան որոշակի հարցեր, բայց ես կարծում եմ, որ այդ հարցերը կարող են լուծվել եւ պետք է լուծվեն, եւ կրկնում եմ՝ մեկ տնտեսական միության մեջ գտնվող երկրները կարող են ունենալ խնդիրներ, բայց նաեւ հենց այդ տնտեսական միությունը պետք է օգնի, որպեսզի դրանք լուծվեն: Մեր խնդիրն, ի վերջո, այն է, որ գտնենք համապատասխան բանաձեւեր ռուսաստանցի գործընկերների հետ, եւ դրանց շրջանակում տանք լուծումներ, որպեսզի մեր արտահանումը նորից բացվի, որովհետեւ մենք եւս համակարծիք ենք, որ Հայաստանի Հանրապետությունից բարեկամ երկրներ եւ առհասարակ բոլոր ուղղություններով պետք է արտահանվի որակյալ ապրանք»,-եզրափակել է ՀՀ էկոնոմիկայի նախարարը:

Ռուսաստանը Հայաստանում հունիսի 7-ին կայացած խորհրդարանական ընտրություններին ընդառաջ արգելքներ եւ սահմանափակումներ էր կիրառել հայկական բազմաթիվ ապրանքների ներմուծման նկատմամբ, որոնք շարունակվում են մինչ օրս:

Ռուսաստանի կողմից Հայաստանի նկատմամբ ներմուծման այս արգելքների ֆոնին Հայաստանը դիվերսիֆիկացնում է արտահանման շուկաները դեպի Եվրոպական միության եւ այլ շուկաներ:

● *Անցած 1 օրում գրանցվել է 10 ավտովթար. 12 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԱՄՈՒԼՍԱՐ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ՄՇԱԿՈՒՅԹ

Ամուլսարում գրանցվել է 1 մլն մարդ/ժամ առանց աշխատաժամանակի կորստով պատահարի (LTI) ցուցանիշը:

Օրերս Լիդիան Արմենիա-ի աշխատակիցները եւ Ամուլսարի ծրագրում ներգրավված կապալառու ընկերությունների ներկայացուցիչները հանդիսավորությամբ նշեցին Ամուլսարում շինարարական աշխատանքների ընթացքում իրենց համատեղ գրանցած հաջողությունը՝ 1 մլն մարդ/ժամ առանց աշխատաժամանակի կորստով պատահարի ցուցանիշը:

Հանքարդյունաբերության ոլորտում այս ցուցանիշով գնահատվում է առողջության եւ աշխատանքային անվտանգության ոլորտում ընկերությունների գործունեությունը: Այն նշանակում է, որ ընկերության աշխատակիցները բոլորը միասին աշխատել են 1 միլիոն ժամ՝ առանց որեւէ պատահարի, որի հետեւանքով աշխատակիցը կարող էր բացակայել աշխատանքից կամ չկարողանար վերադառնալ իր հիմնական պարտականություններին:

Միջոցառման ընթացքում Լիդիան Արմենիա-ի գործադիր տնօրեն Հայկ Ալոյանը, եւս մեկ անգամ կարեւորելով Ամուլսարում աշխատանքային անվտանգությունը՝ ողջունեց եւ շնորհավորեց թիմին՝ միաժամանակ պահանջելով՝ ամեն օր, ամեն ժամ բարելավել աշխատանքային անվտանգության մակարդակը Ամուլսարում: Նա հիշեցրեց, որ պատշաճ աշխատանքային անվտանգության ապահովումը թիմի յուրաքանչյուր անդամի պարտականությունն է. այն թիմային աշխատանքի եւայն միմյանց մասին հոգ տանելու մասին է: «Լիդիան Արմենիայի եւ ինձ համար անհատապես Ամուլսարում աշխատանքային անվտանգության պատշաճ ապահովումը միշտ եղել է առաջնահերթություն:

Դրանք զուտ խոսքեր չեն, այլ մեր հանձնառությունը եւ տարիների ընթացքում ձեւավորված այն մշակույթը, որով մենք շարունակում ենք առաջնորդվել, ինչպես նաեւ տարածել այդ մշակույթը մեր գործընկերների շրջանում եւ համայնքներում: Ամուլսարի ծրագրում յուրաքանչյուր ոք պետք է վերադառնա տուն անվտանգ եւ ապահով»,- նշեց Հայկ Ալոյանը:

Միջոցառումն ամփոփվեց խորհրդանշական ստորագրման արարողությամբ. թիմի յուրաքանչյուր անդամ ստորագրեց հատուկ պատրաստված պաստառը՝ մեկ անգամ եւս վերահաստատելով անվտանգ աշխատելու եւ միմյանց մասին հոգ տանելու հանձնառությունը: *(Գ)*

ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ

Գ

ԱԿՆԹԱՐԹԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ՝ ԱՌԱՎԵԼ ՊԱՀԱՆՋՎԱԾ

ՎՏ -Հայաստան Բանկի ֆիզիկական անձ հաճախորդները շարունակում են ակտիվորեն օգտվել ռուսական МИР քարտերին անվճար դրամական փոխանցումների ծառայությունից: Վերջին 6 ամիսների ընթացքում փոխանցումների ծավալն աճել է 40%-ով:

Միջազգային փոխանցումների ծառայությունների զարգացման շրջանակում՝ ՎՏԲ-Հայաստան Բանկն առաջարկում է դեպի Ռուսաստան քարտի համարով ակնթարթային փոխանցումների հնարավորություն՝ բանկի բջջային հավելվածի եւ most.vtb.am կայքի միջոցով: Այս լուծումը նպաստում է գործարքների արագության եւ հարմարավետության բարձրացմանը:

Մեկ փոխանցման նվազագույն գումարը կազմում է 100 ռուբլի, իսկ առավելագույնը՝ 399 հազար ՀՀ դրամին համարժեք ՌԴ ռուբլի: Մեկ քարտից օրվա ընթացքում կարելի է կատարել մինչեւ երեք փոխանցում՝ չգերազանցելով սահմանված ընդհանուր սահմանաչափը:

«Այս ծառայությունը գործարկել ենք նախորդ տարվա գարնանը՝ նպատակ ունենալով առաջարկել հարմար եւ հասանելի լուծում հաճախորդների լայն շրջանակի համար, եւ այսօր արդեն արձանագրում ենք դրա նկատմամբ կայուն բարձր հետաքրքրություն: Ծառայությունը հատկապես պահանջված է այն հաճախորդների շրջանում, ովքեր Ռուսաստանում ունեն հարազատներ, ընկերներ կամ գործընկերներ, ինչպես նաեւ նրանց մոտ, ովքեր պարբերաբար այցելում են ՌԴ եւ կարեւորում են ռուբլով քարտերն արագ ու հարմարավետ համալրելու հնարավորությունը՝ շահավետ փոխարժեքով: Այն փաստը, որ վերջին վեց ամիսների ընթացքում փոխանցումների ծավալն աճել է 40%-ով, վկայում է ծառայության բարձր պահանջարկի եւ ակտիվ օգտագործման մասին», - նշել է ՎՏԲ-Հայաստան Բանկի Գլխավոր տնօրենի - Տնօրինության նախագահի տեղակալ Տարաս Կլադչենկոն:

Ծառայության հիմնական առավելություններից են միջնորդավճարի բացակայությունը եւ ՀՀ դրամից ՌԴ ռուբլու փոխարկման շահավետ փոխարժեքը: Ծառայությունը հասանելի է շուրջօրյա՝ շաբաթվա բոլոր օրերին, իսկ փոխանցումները կատարվում են գրեթե ակնթարթորեն, միջինը՝ մեկ րոպեի ընթացքում:

Փոխանցում իրականացնելու համար անհրաժեշտ է ՎՏԲ-Հայաստան Բանկի կայքում անցնել «Փոխանցումներ» բաժին, ապա՝ «Փոխանցումներ Ռուսաստան» ենթաբաժինը: Այնուհետեւ անհրաժեշտ է ընտրել «ՌԴ բանկերի քարտերին» էջը, սեղմել «Փոխանցել» կոճակը եւ անցնել օնլայն փոխանցումների էջ: Բացված հայտում անհրաժեշտ է լրացնել ուղարկողի եւ ստացողի տվյալները:

Ծառայության վերաբերյալ մանրամասն տեղեկություն կարելի է ստանալ ՎՏԲ-Հայաստան Բանկի պաշտոնական կայքում, Բանկի մասնաճյուղերում կամ զանգահարելով Կոնտակտային կենտրոն՝ 87 87 հեռախոսահամարով:

ՎՏԲ-Հայաստան Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

ԲԱՆԿԵՐ

Գ

ԻՆՉՊԵ՞Ս ԶԱՐԳԱՑՆԵԼ ԲԻԶՆԵՍԸ

Ակբա բիզնես ակումբում գործարարները քննարկել են բոլոր առավելություններն ու հեռանկարները, որոնց հնարավոր է հասնել բիզնեսում լիզինգի միջոցով: Ակումբում լիզինգի բոլոր առավելություններն ու ընձեռած հնարավորությունները գործարարներին ներկայացրել են Հայաստանի լիզինգային շուկայի առաջատար Ակբա Լիզինգի գլխավոր տնօրեն Աղասի Գասպարյանն ու ընկերության մատակարարների հետ համագործակցության բաժնի ղեկավար Վահագն Շմավոնյանը: Ակբա բիզնես ակումբում գործարարները ոչ միայն հնարավորություն են ստանում ծանոթանալ բիզնեսի կառավարման եւ զարգացման արդյունավետ լուծումներին ու գործիքներին, այլեւ ձեռք են բերում նոր գործընկերներ, զարգացնում գործարար հարաբերությունները, խորհուրդներ ստանում բիզնեսի տարբեր ոլորտների լավագույն մասնագետներից:

Ակբան առաջինն է բանկային համակարգում, որը ձեռներեցության զարգացման եւ նոր գործարար մշակույթ ձեւավորելու համար հիմնել է բիզնես ակումբ՝ գործարարների համար դառնալով կարեւոր հարթակ փորձի փոխանակման եւ բիզնես թեմաների քննարկման համար: «Ակբա Բիզնես Փարթնր» ենթաբրենդի ներքո ՓՄՁ ղեկավարներին հնարավորություն է տրվում ձեռք բերել նոր գիտելիքներ եւ կառավարման համար անհրաժեշտ գործիքներ, հաստատել նոր գործարար կապեր, ինչպես նաեւ դառնալ բիզնես համայնքի անդամ:

«Ակբա Բիզնես Փարթնր» ենթաբրենդի շրջանակում ՓՄՁ ղեկավարները կարող են.

- մասնակցել անվճար բիզնես դասընթացների,
- դառնալ Ակբա բիզնես ակումբի անդամ,
- օգտվել acba.am օնլայն բիզնես հարթակի հնարավորություններից,
- առավել ճանաչելի դարձնել սեփական արտադրանքը՝ մասնակցելով «Արտադրված է մեր գործընկերների կողմից» նախագծին:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

ՀԱՅՏՆԻ ԵՆ ՀԱՂԹՈՂՆԵՐԸ



Ընտանեկան ուղեւորություն Փարիզ երեք անձի համար, Սիթիզենի տարեկան բաժանորդագրություններ եւ ոչ միայն...

Ամփոփվել են Arca-ի, Կոնվերս Բանկի եւ Սիթիզենի արշավի արդյունքները: Մրցանակները հաղթողներին են հանձնվել ամփոփիչ միջոցառման ժամանակ: Գլխավոր մրցանակակիր Անի Ջախարյանի խոսքով, արշավի մասին տեղեկացել է հենց Սիթիզենում՝ Կոնվերս Բանկի C360 Arca քարտով վճարման ժամանակ: Դա, ի դեպ, եղել է քարտով առաջին վճարումը: Անսպասելի մրցանակը ոչ միայն ոգեւորել, այլեւ խրախուսել է նրան այսուհետ եւս գործարքներ կատարել հենց C360 Arca քարտով:

Նշենք, որ արշավն իրականացվել է մայիսի 28-ից մինչեւ հունիսի 5-ը ներառյալ: Արշավի մասնակից են դարձել բոլոր նրանք, ովքեր Սիթիզենում գնումներ են կատարել Կոնվերս Բանկի C360 Arca քարտով, լրացրել տվյալները եւ գցել մասնակցության կտրոնն արկղի մեջ:

Կոնվերս Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵԼ Է ՅՈՒՆԻԲԱՆԿԻ B1 ՎԱՐԿԱՆԻՇԸ

Moody's Ratings միջազգային վարկանիշային գործակալությունը վերահաստատել է Յունիբանկի երկարաժամկետ տեղական եւ արտարժույթով ավանդների վարկանիշը B1 մակարդակում՝ պահպանելով կայուն հեռանկարը: Միաժամանակ, Moody's-ը վերահաստատել է բանկի Վարկունակության բազային գնահատականը (BCA) եւ ճշգրտված BCA վարկանիշը b2 մակարդակում, տեղական արժույթով եւ արտարժույթով կարճաժամկետ ավանդների NP վարկանիշը, ինչպես նաեւ կոնտրագենտի ռիսկի վարկանիշը (CRRs) B1/NP եւ կոնտրագենտի ռիսկի գնահատականը (CR Assessment) B1(cr)/NP(cr) մակարդակներում:

Վարկանիշների վերահաստատումն արտացոլում է Յունիբանկի ակտիվների որակի էական բարելավումը, կայուն շահութաբերությունը եւ շուկայական ֆինանսավորման աղբյուրներից սահմանափակ կախվածությունը:



●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՍՊԻՏԱԿ ԶԳԵՍՏ

ԱՄԱՌՎԱ ԳԼԽԱՎՈՐ ԹՐԵՆԴԸ

Տարիներ շարունակ նորաձեւության անփոխարինելի դասականներից մեկը համարվել է փոքրիկ սեւ զգեստը (LBD), սակայն այս ամառ աստղերը նախընտրում են դրա ավելի թարմ եւ սեզոնային տարբերակը՝ փոքրիկ սպիտակ զգեստը:

Վերջին շաբաթներին Taylor Swift-ը, Kendall Jenner-ը եւ Zoey Deutch-ը հանրության ուշադրության կենտրոնում հայտնվել են տարբեր ոճերի սպիտակ զգեստներով՝ ապացուցելով, որ այս հագուստը կարող է լինել ինչպես էլեգանտ, այնպես էլ առօրյա կերպարների կատարյալ հիմքը: Աստղերից յուրաքանչյուրն ընտրել է տարբեր ձեւվածք. Թեյլոր Սվիֆթն ու Զոի Դոյչը նախընտրել են թեթեւ եւ ազատ ուրվագծով մինի զգեստներ, որոնք իդեալական են ամառային զբոսանքների եւ ոչ պաշտոնական հանդիպումների համար: Իսկ Քենդալ Ջենների ընտրությունը եղել է ավելի կիպ, միջին երկարության զգեստ, որը հարմար է թե՛ աշխատանքի, թե՛ երեկոյան միջոցառումների համար:

Սպիտակ զգեստների առավելությունը դրանց բազմակողմանիությունն է: Դրանք կարելի է համադրել ինչպես հարթակ կոշիկների եւ սանդալների, այնպես էլ բարձրակրունկների հետ՝ ստանալով բոլորովին տարբեր կերպարներ: Բացի այդ, թեթեւ գործվածքներն ու բաց գույնը հատկապես հարմար են ամառային շոգ օրերին:

Նորաձեւության փորձագետները նշում են, որ այս սեզոնին հատկապես պահանջված են բնական նյութերից՝ օրինակ՝ կտավից կամ օրգանական բամբակից պատրաստված սպիտակ զգեստները: Աչքի են ընկնում նաեւ ժանյակային եւ eyelet դետալներով մոդելները, որոնք կերպարին հաղորդում են կանացի եւ ռոմանտիկ շունչ:

Եթե ցանկանում եք թարմացնել ձեր ամառային զգեստապահարանը, ապա սպիտակ զգեստը կարող է դառնալ ամենահաջող ներդրումներից մեկը: Այն հավասարապես հարմար է աշխատանքի, նախաճաշի հանդիպումների, ճանապարհորդությունների եւ հանգստյան օրերի համար՝ ապահովելով նրբագեղ ու թարմ տեսք ցանկացած իրավիճակում:

«ՅՈՒՆԻԲԱՆԿ»

«Յունիբանկ» ԲԲԸ աճուրդի մասին հրապարակային ծանուցում

2026թ-ի հունիսի 30-ին ժամը 11:00-ին կազմակերպիչ «Յունիբանկ» ԲԲԸ կողմից ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում կանցկացվի աճուրդ հոլանդական եղանակով: Թիվ 43 լոտ՝ ոսկյա ջարդոն 18.05գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 16.87գր), որից 0.87գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն 500 հարգի՝ 21.423 ՀՀ դրամ, 17.18գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 16գր) 585 հարգի՝ 460.900 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 482.323 ՀՀ դրամ: Թիվ 44 լոտ՝ ոսկյա ջարդոն 19.8գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 19գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 547.390 ՀՀ դրամ: Թիվ 45 լոտ՝ ոսկյա ջարդոն 154.9գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 150գր), որից 96գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 95.5գր) 585 հարգի՝ 2.751.300 ՀՀ դրամ, 14գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն 958 հարգի՝ 660.500 ՀՀ դրամ, 20.7գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 19գր) 500 հարգի՝ 467.800 ՀՀ դրամ, 24.2գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 21.5գր) 585 հարգի՝ 619.400 ՀՀ դրամ լոտի մեկնարկային գինը 4.499.000 ՀՀ դրամ: Թիվ 46 լոտ՝ ոսկյա ջարդոն 10.1գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 10գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 288.100 ՀՀ դրամ: Թիվ 47 լոտ՝ ոսկյա ջարդոն 14.2գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 12.5գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 360.000 ՀՀ դրամ: Թիվ 48 լոտ՝ ոսկյա ջարդոն 2.8գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 2.6գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 74.900 ՀՀ դրամ: Թիվ 49 լոտ՝ ոսկյա ջարդոն 9.1գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 7.5գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 216.000 ՀՀ դրամ: Թիվ 50 լոտ՝ ոսկյա ջարդոն 4.3գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 4գր) 500 հարգի, լոտի մեկնարկային գինը 98.500 ՀՀ դրամ: Թիվ 51 լոտ՝ ոսկյա ջարդոն 154.1գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 151.7գր), որից 5.7գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն 958 հարգի՝ 268.900 ՀՀ դրամ, 76.5գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 75գր) 585 հարգի՝ 2.160.000 ՀՀ դրամ, 71.9գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 71գր) 500 հարգի՝ 1.748.300 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 4.177.200 ՀՀ դրամ: Թիվ 52 լոտ՝ ոսկյա զարդ 37.9գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 37գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 1.065.000 ՀՀ դրամ: Թիվ 53 լոտ՝ ոսկյա զարդ եւ ջարդոն 9.6գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 9.3գր), որից 3.6գր ընդհանուր քաշով ոսկյա զարդ(զուտ քաշը 3.3գր) 500 հարգի՝ 81.262 ՀՀ դրամ, 6գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն 900 հարգի՝ 265.944 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 347.206 ՀՀ դրամ: Թիվ 54 լոտ՝ ոսկյա ջարդոն 4.2գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 4գր) 500 հարգի, լոտի մեկնարկային գինը 98.500 ՀՀ դրամ: Թիվ 55 լոտ՝ ոսկյա ջարդոն 6.3գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 5.4գր), որից 3.3գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 2.5գր) 500 հարգի՝ 61.500 ՀՀ դրամ, 3գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 2.9գր) 585 հարգի՝ 83.500 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 145.000 ՀՀ դրամ: Թիվ 56 լոտ՝ ոսկյա զարդ եւ ջարդոն 26.4գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 25.2գր), որից 6.2գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 5.2գր) 500 հարգի՝ 128.000 ՀՀ դրամ, 20.2գր ընդհանուր քաշով ոսկյա զարդ(զուտ քաշը 20գր) 585 հարգի՝576.200 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 704.200 ՀՀ դրամ: Թիվ 57 լոտ՝ոսկյա ջարդոն 7.5գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 7.4գր), որից 5.3գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն 958 հարգի՝ 250.000 ՀՀ դրամ, 2.2գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 2.1գր) 585 հարգի՝ 60.500 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 310.500 ՀՀ դրամ: Թիվ 58 լոտ՝ ոսկյա ջարդոն 24,2գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 22.5գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 648.200 ՀՀ դրամ: Թիվ 59 լոտ՝ոսկյա զարդեր 73գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 72գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 2.074.300 ՀՀ դրամ: Թիվ 60 լոտ՝ ոսկյա ջարդոն 26.1գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 24գր), որից 21.7գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 20գր) 585 հարգի՝576.200 ՀՀ դրամ, 4.4գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 4գր) 500 հարգի՝98.500 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 674.700 ՀՀ դրամ: Թիվ 61 լոտ՝ ոսկյա ջարդոն 39.1գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 35.3գր), որից 22.5գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 19.3գր) 585 հարգի՝ 556.000 ՀՀ դրամ, 16.6գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 16գր) 500 հարգի՝ 394.000 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 950.000 ՀՀ դրամ:

Թիվ 62 լոտ՝ ոսկյա ջարդոն 29,1 գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 28գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 806.600 ՀՀ դրամ: Թիվ 63 լոտ՝ ոսկյա ջարդոն 16.2գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 16գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 461.000 ՀՀ դրամ: Թիվ 64 լոտ՝ ոսկյա ջարդոն 7.3գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 7գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 201.600 ՀՀ դրամ: Թիվ 65 լոտ՝ ոսկյա զարդ 10.3գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 9.5գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 273.695 ՀՀ դրամ: Թիվ 66 լոտ՝ոսկյա զարդեր 108.8գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 108.5գր), որից 78.2գր ընդհանուր քաշով ոսկյա զարդեր(զուտ քաշը 78գր) 585 հարգի՝ 2.247.180 ՀՀ դրամ, 30.6գր ընդհանուր քաշով ոսկյա զարդեր(զուտ քաշը 30.5գր) 500 հարգի՝751.000 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 2.998.180 ՀՀ դրամ: Թիվ 67 լոտ՝ ոսկյա զարդեր 68.5գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 68գր) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 1.959.080 ՀՀ դրամ: Թիվ 68 լոտ՝ ոսկյա ջարդոն 11.9գր ընդհանուր քաշով 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 342.839 ՀՀ դրամ: Թիվ 69 լոտ՝ ոսկյա ջարդոն 39.6գր ընդհանուր քաշով(զուտ քաշը 39.4գր), որից 2.4գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն 500 հարգի՝ 59.100 ՀՀ դրամ, 37.2գր ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն(զուտ քաշը 37գր) 585 հարգի՝ 1.065.970 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 1.125.070 ՀՀ դրամ: Վերոնշյալ լոտերի մեկնարկային գինը, կապված աճուրդի օրվա դրությամբ ոսկու շուկայական գնի փոփոխության հետ, կարող է փոփոխվել մինչեւ մեկնարկային գնի 5%-ի չափով: Լոտերը գրավի առարկա են, վիճակը բարվոք: Աճուրդին մասնակցելու համար ներկայացնել անձնագիր, մասնակցի վկայական /տրամադրվում է տեղում/, հաղթող է ճանաչվում առավելագույն գին առաջարկած մասնակիցը, նախավճարը՝ լոտի 5 %-ի չափով, վճարվում է կազմակերպչին աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ, լոտի ուսումնասիրումը՝ մինչեւ աճուրդի բացմանը նախորդող յուրաքանչյուր երկուշաբթի եւ ուրբաթ օրերին՝ ժամը 9:00-13:00 ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը աճուրդի անցկացման վայրն է, պատճենը տրամադրվում է դիմումի հիման վրա:

Հեռ.՝ +374 43 00 42 27

Յունիբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

ԼՈՒՐԵՐ

ԱՅԼԵՎՍ ՉԵՆ ՍՊԱՍԱՐԿՎԵԼՈՒ

Տեղեկացնում ենք, որ Հայէկոնոմբանկի Arca մագնիսական ժապավենով (առանց չիպ) քարտերը սպասարկվելու են մինչեւ 2026 թվականի հունիս ամիսը ներառյալ: Վերոնշյալով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել Arca մագնիսական ժապավենով քարտերը վերաթողարկել չիպային քարտերով: Անհրաժեշտ է անձը հաստատող փաստաթղթով մոտենալ Հայէկոնոմբանկի ցանկացած մասնաճյուղ քարտի անվճար վերաթողարկման համար:

Չիպային քարտերի օգտագործման պայմանները նույնն են, ինչ մագնիսական ժապավենով քարտերի դեպքում: Չիպային քարտերով գործարքներն ավելի ապահով են եւ հնարավորություն են ընձեռում իրականացնել նաեւ անհպում գործարքներ:

86 86 | aeb.am

Հայէկոնոմբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից (Գ)

ՄԵՍՍԻԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵԹ-ՏՐԻԿԸ

Աշխարհի 2026 թվականի առաջնության առաջին տուրի Ժ խմբի մեկնարկային խաղում, ԱՄՆ-ի Միսսուրի նահանգի Կանզաս քաղաքի «Արոուհեդ» մարզադաշտում, աշխարհի գործող չեմպիոն Արգենտինայի հավաքականը 3-0 հաշվով վստահ հաղթանակ տարավ Ալժիրի ընտրանու նկատմամբ:

Հանդիպման գլխավոր հերոս դարձավ Լիոնել Մեսսին, որն մասնակցեց իր թիմի բոլոր գոլային գրոհներին եւ դարձավ հեթ-տրիկի հեղինակ: Արգենտինացիների ավագը հաշիվը բացեց 17-րդ րոպեին, իսկ 60-րդ րոպեին կրկնապատկեց այն: 76-րդ րոպեին Նիկո Գոնսալեսի փոխանցումից հետո Մեսսին խփեց իր երրորդ գնդակը՝ ձեւակերպելով հանդիպման վերջնահաշիվը:

Այս հանդիպումը պատմական նշանակություն ունեցավ լեգենդար ֆուտբոլիստի համար: Սա Մեսսիի առաջին հեթ-տրիկն էր աշխարհի առաջնություններում, որի շնորհիվ նա իր գոլերի քանակը հասցրեց 16-ի՝ հավասարվելով մունդիալների պատմության բոլոր ժամանակների լավագույն ռմբարկու, գերմանացի Միրոսլավ Կլոզեին:

Հաջորդ տուրում Արգենտինայի հավաքականը հունիսի 22-ին կմրցի Ավստրիայի, իսկ Ալժիրը հունիսի 23-ին կհանդիպի Հորդանանի ընտրանու հետ: *(Նյութը՝armsport-ից)*

● *Ա .Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում հունիսի 27-ին՝ժամը 18:00-ին, կկայանա «Կարմեն» օպերան:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Կցանկանայի իմանալ, թե որ դեպքերում է զորակոչիկին տարկետում տրվում՝ ընտանեկան պայմաններից ելնելով:

Սերոբ Ազիզյան, 47 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության հայտարարված զորակոչից ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տրվում է այն քաղաքացուն, որն ունի՝

1) 65 տարին լրացած կամ առաջին խմբի հաշմանդամություն ունեցող կամ երկրորդ խմբի հաշմանդամություն (որը սահմանվել է ինքնասպասարկման ապահովման ունակության առնվազն երկրորդ աստիճանի կենսագործունեության սահմանափակման հիմքով) ունեցող կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված ծնողներ (միայնակ ծնող), եթե ծնողները (միայնակ ծնողը)՝

ա. չունեն այլ զավակ կամ

բ. ունեն այլ զավակ, որն անչափահաս է կամ ունի հաշմանդամության խումբ կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ կամ գտնվում է պարտադիր զինվորական ծառայության մեջ.

2) առանց մոր մեծացող երեխա.

3) երկու կամ ավելի երեխա, բացառությամբ որդեգրված երեխաների.

4) երկրորդ երեխայով կամ առնվազն զույգ երեխայով վեցամսյա հղիության մեջ գտնվող կին.

5) մինչեւ 18 տարեկան կամ 18 տարեկանից բարձր, բայց առաջին խմբի հաշմանդամություն ունեցող կամ երկրորդ խմբի հաշմանդամություն (որը սահմանվել է ինքնասպասարկման ապահովման ունակության առնվազն երկրորդ աստիճանի կենսագործունեության սահմանափակման հիմքով) ունեցող կամ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված քույր կամ եղբայր, եթե չկա վերջիններիս ընտանիքի անդամ համարվող այլ անձ, կամ կա այդպիսի անձ, որը, սակայն, ունի հաշմանդամության խումբ կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ, կամ տարիքային աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրացած անձ է:

2. Եթե քաղաքացին անչափահաս տարիքում օրենքով սահմանված կարգով ճանաչվել է առանց ծնողական խնամքի մնացած երեխա եւ որդեգրվել է խնամատար հաստատությունից, եւ առկա են «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կամ 5-րդ կետերով նախատեսված պայմանները, ապա նա օգտվում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու իրավունքից: Ընտանիքի անդամ են համարվում հայրը, մայրը, քույրը, եղբայրը, տատը, պապը, ինչպես նաեւ խնամակալ կամ հոգաբարձու ճանաչված այլ անձը:

(Շարունակությունը՝ հաջորդ համարում)

ՀՀ ՊՆ

Էջը՝ ՄԱՐԻԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ է նշանակում մասունքով խաչ: Խաչի մեջ արդյո՞ք որեւէ սրբի մարմնի հատված կա:

Սուրեն Գասպարյան, 77 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Հնագույն սովորություն է սրբերի մարմնի մասերը՝ որպես իր կատարած մարտիրոսության արդյունք, դարձնել աղոթքի եւ պաշտամունքի միջոց: Հին Կտակարանում գրված է. «Հովսեփը, դիմելով իր եղբայրներին, ասաց. «Ահա ես մեռնում եմ: Աստված թող այցելի ձեզ, հանի այս երկրից ու տանի այն երկիրը, որ Աստված երդվել է տալ մեր նախնիներին՝ Աբրահամին, Իսահակին ու Յակոբին»: Հովսեփը երդվեցրեց Իսրայելի որդիներին ու ասաց. «Այն ժամանակ, երբ Աստված ձեզ կայցելի, այստեղից կհանեք նաեւ իմ ոսկորները եւ կտանեք ձեզ հետ» (Ծնն. 50: 24-25): Երբ նա մահացավ, թաղեցին ու տապանի մեջ դրեցին Եգիպտոսում: Այդպես էլ քրիստոնյաներն առաքյալների, հետագայում նաեւ մարտիրոսների մասունքներն օգտագործում էին եկեղեցիների կառուցման եւ խաչերի կերտման ժամանակ, որպեսզի այդ սրբի բարեխոսությունը տվյալ համայնքի վրա լինի: Հայոց աշխարհը լի է սրբերի եւ նահատակների մասունքներով: Հայտնի են Ս. Գրիգոր Լուսավորչի, Ս. Թադեոս եւ Բարդուղիմեոս առաքյալների աջերը, Հռիփսիմյանց կույսերի նշխարները, որոնք օգտագործվում են Մյուռոնօրհնեքի եւ եկեղեցական այլ տոնակատարությունների ժամանակ:

Հայ առաքելական սուրբ եկեղեցի

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Արարատի մարզի Լանջառ գյուղի վարչական տարածքում բախվել են իրանական համարանիշներով «Volvo» մակնիշի կցորդիչով բեռնատարը եւ «Mercedes»-ը: Կա 1 զոհ, 5 վիրավոր, որոնցից 3-ը անչափահաս են:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 8 + 13 + 20 + 23
	Կոտայքի լեռներ	+ 8 + 12 + 20 + 23
	Կոտայքի նախալեռներ	+ 16 + 19 + 25 + 28
	Գեղարքունիք	+ 8 + 12 + 19 + 23
	Լոռի	+ 10 + 14 + 20 + 24
	Տավուշ	+ 11 + 15 + 21 + 25
	Արագածոտնի լեռներ	+ 7 + 10 + 18 + 22
	Արագածոտնի նախալեռներ	+ 14 + 19 + 24 + 30

	Արարատ	+ 16 + 19 + 30 + 33
	Արմավիր	+ 17 + 20 + 31 + 34
	Վայոց ձորի լեռներ	+ 8 + 12 + 22 + 25
	Վայոց ձորի նախալեռներ	+ 16 + 20 + 31 + 34
	Սյունիքի լեռներ	+ 8 + 12 + 19 + 22
	Սյունիքի նախալեռներ	+ 10 + 15 + 23 + 26
	Սյունիքի հովիտներ	+ 17 + 21 + 28 + 32
	Երեւան	+ 18 + 20 + 31 + 33

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **17.06.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*